

ՍԵՄԵՆՈՎԻՍՏԻՆՆԵՐԻ

Պուշկարին	հաւար
Տարեկան	12 ֆր
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "
Անկերիսայի	հաւար
Տարեկան	3 ռյ.
Վեցամսեայ	1.50 "

Իրանում ընդհանուր սուս լինելու հետեւ 10 ս. իսկ վերջին երեսի հաւար 20 սանիթի է. երեքինը անկերիսայի հաւար 20 0/0 զեղչ կը ըստ վստահայի հաւար ձեռք 10 սանիթի

# ՇԱՐՔՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՄԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐ ՏՄԻՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԱԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եր դրամ դ կ'ի  
Խմբագրությունս հաս-  
ցի ին

Редакция ва вѣст  
"Шаркում"  
Варша

du Journal  
"Anghelo"  
R. P. Kalemcaran  
(Anghelo)  
Agarie)

Արտասահմանի հաւար  
ձեռք  
( 20 ՍԻՆԹԻՄ )  
Պուշկարին հաւար  
ձեռք  
( 15 ՍԻՆԹԻՄ )

Գրութիւնք եւ չնն տրուի

## 4 Ո Չ

Հայրենակիցներ, Ծնունդ նոր տարի մըն տլ պիտի թնտախոսենք մասյլ հեռապատկերներով, արիւնտ յոյսերով ու սարսափեցուցիչ անակնկալներով յի տարի մը: Ճգնաժամային մօտ շուտ վտանգի մը սարսափը նոր տարիին սեմէն ներս կուգայ և կը տարածուի ամբողջ Հայաստան վրայ: Ընդվզումի հսկայ սփիւնքը, գարաւոր ստրկացումէն և տառապանքներէն մոլորեցած ու արիւնի ծարաւ կր պատրաստուի ոտքի կանգնել և կատաղի կուր հրատարակել Հայու Ազատագրութեան Մեծ Կործին համար:

Խոհարար սուր յոյսերու և գտն յուսախտութեանց հեռապատկեր մըն է, որ նոր Տարին կը բերէ Հայաստան կաղանկ չէքի փոխան:

Այս մեծ, արտասահմանի Հայերս, մեր տաք սենեակներու անկիւնը, փոփոկ բազմոցներու մէջ ընկղմած մեր սիրասուն փոքրիկները, մեր վարար տիկիները ու բոլոր սիրելիները կաղանկի նուէրներով սարսափեցուցած միջոցին արդեօք վայրկեան մը չի պիտի փորձենք մը տարբեր մեր տանջուող Հայրենիքի վիճակը, չի պիտի փորձենք անգրագոտնալ մեր պղծին սպառնացող մօտալուտ ահեղ վտանգներուն վրայ, չի պիտի խորհինք արդեօք հայթայթել միակ կողմնորոշեցը, որ թեև ու թիկունք պիտի տայ Հայաստանի հպարտ բարձունքներուն վրայ մարտնչող քաջ ֆէտայիին, այն է պէնքը:

Հայրենակիցներ, Հերիք չէ՞ որքան ատեն ընդարմացած ու անհոգ տարուբերութեան գիրկը ու թուլ տուրիք որ մեր անընտրող միտքը ամէն պատահական քամիներու գլուխ խոնարհնցնելով մահացնէ ու ըսպառն ազատագրութեան գործը:

Հիմա ալ տատամսելու ժամանակ չիկայ. համոզուինք, որ զէնք միայն զէնք պէտք է մեզի, և ուրիշ ոչինչ:

Ձէնք տուէք հայդուկին, հայրենակիցներ:

Ահա ամբողջ աշխարհ վճռական երկունքի ժամբէ կապրի, յուզումը ընդհանուր և կուր սարսափելի: Վայ է եկեր անզէն ու անպաշտպան ժողովրդին, սարսափելի է այնպիսիին վիճակը, արցունք ու արիւն է անոր բաժինը, սեւ ու սուգ է անոր բազը, մահ ու բնաջնջում է անոր պագան: Հայաստանը չուզեր մեռնիլ և որպէսզի իր կեանքը պահէ զէնք, զէնք կաղաղակէ:

Ձէնք տուէք հայդուկին, հայրենակիցներ:

Անէ՞՞ք կուզէք, որ ձեր երեսին որոտան Սասունի, Ձէլթունի, Սիփանի և Վարազի լեռներուն անմատոյց բարձունքներէն առիւծաբալ մարտնչող ու նահատակուող ֆէդայիները:

Անէ՞՞ք կուզէք, որ ձեր վրայ տեղան պաշտերուն մէջ, իրենց երգիքն, ուն տակ անպաշտպան մնացած հէք մայրերը՝ գաղանքիւրտիբու սուրբէն խողխողուելով:

Անէ՞՞ք կուզէք, որ ձեր վրայ թափեն ալիւոր ձերուին, անմեղ մանուկը կամ լիկուած կոյսը, երբեք՝ Վատութիւնը դեռ այդքան պարհուրելի կերպով չէ թունաւորած ձեր երակները, եւ այս պահուս իսկ, յետամնացի մը յանցապարտ ամօթխածութենէն շիկնած՝ դուք պիտի փութաք արգէն Հայաստանի մէջ կուրող հայդուկին նոր տարին շնորհաւորել, անոր զէնք մը շրկելով կաղանկ չէքի փոխան:

Ձէնք տուէք հայդուկին, հայրենակիցներ:

Խաչիկ Յ. Թօնաճաճեան  
Միհրան Ռ. Մայրապետեան  
Սիփան, 18 դեկտ.

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

I

Մի շարք ցաւերի, անթիւ հեծածանքների մի հիւսուածք է կազմած հայ ժողովրդի կեանքը այստեղ, տառապանքի այս աշխարհում: Դուք, սիրելի ընթերցող, շատ ցաւոս զէպքեր, սարսափելի պատմութիւններ էք լսել այս երկրում: Սարսափում ապրող մի բուն հայ ազգաբնակչութեան մասին, անթիւ գաղբիլ բռնունութիւններ, անողոք հարստահարութիւններ: Այդ բոլորի մասին, ասուած եմ, լսել էք: Ես էլ էի լսել, լսել հեռուից, շատ հեռու նստած: Բայց վերջերս ասիթ ունեցայ մի պոռոյտ կատարել այդ տառապանքի տարատեսակ, դառնութիւնը հէնց տեղն ու տեղը ճաշակեցի: Ահա այդ դառնութիւնն է, որ ուզում եմ կամայ կամաց հաղորդել «Շարքում» ընթերցողներին: Ես հնարաւորութիւնը չունեցայ իր ժամանակին հէնց Սալմաստից պարբերաբար գրել որովհետեւ անընդհատ շրջում էի իսկ այժմ երբ արդէն վերադարձել եմ տեղս, ուզում եմ սկսել նամակներին շարքը:

Տաճկահայաստանը, այդ ընդարձակ երկիրը աստի հերիք չէր կարմիր Սուլթանի, այդ հիւանդ, ցաւաքար մարդի բարբարոսութիւնների համար: Այժմ ոտքը դնում է եւ այս կողմը, նկատելի կերպով փոխուել է քուրտ աշիրէթիներ վերաբերումներ հայերի: Ժողովուրդը հայ յեղափոխականների վերաբերմամբ Այժմ այլեւս այնպէս հեշտութեամբ չեն ընկնում տաճիկ կառավարութեան սարքած թակարդների, նրա հիւսած ցանցերի մէջ: Կրտսեղութիւնը այդ զէպքում քրտերի մէջ որոշ, այն էլ յայտնի դեր է խաղում: Եւ այդ կատարել է մի քանի տարիների ընթացքում եւ տաղանք է շնորհիւ հայ յեղափոխականների անգուլ անդադրում պրոպագանդայի շնորհով: Պարսկա-տաճկական սահմանադրում եղած աշիրէթները, եթէ ոչ թուրք, գոնէ մի քանիսը, ակնյայտնի յեղափոխականների կողմն են, եւ ասիթի զէպքում նրանք եթէ չանցնին էլ հայ յեղափոխականների կողմը, գոնէ չեն էլ դիմադրի, այլ կը բռնեն չեղաք դիրք: Իսկ հէնց այդ էլ քիչ բանն է: Եւ այդ ասում եմ, կատարել է հայ յեղափոխականների շարքերով, համարեայ բացառապէս զանազանականներ:

Քիչրոտ աշիրէթների այդ սրամարութիւնը նրանց գիտակցութեան դայ: աստի իմացել է արիւնի կատարութիւնը, նա իսկոյն միջոցներ է ձեռք առնում դարձի բերել նրանց, դնել նստիկին վիճակի մէջ: Այդ հանգամանքը, ասում եմ, հանգստութիւն չի տալիս տաճիկ կառավարութեան եւ ձգտում են հակառակը սրամարքել:

Վերջերս Սարմաստի ներկայ դատարար, Մաջիդ-ու-սալթանին ձեռք է բերել մի նամակ, ընդարձակ գրութիւնը, որը կոչի բնատրութիւն է կրում եւ գալիս է մեր ասածները պայտուցանելու: Այդ գրութեան հեղինակն է Շէյխ Համիտ փաշան, որ դիմում է քիւրդ ազաներին եւ ազա-խիսյաներին եւ դրանով նախատում քրտերին իրենց վատ ընթացքի համար եւ գրգռում նրանց:

«Ահա քեզ է որ դուք, աւելացնում է Շէյխ Համիտ փաշան, բոլորը միահամուռ ձեր ջանն ու մարտնչեք բարձր պետութեան չաներին եւ հպատակեք մուսուլմանների սուլթանի հրամանին, նրա համար չնհաս չէք ձեր կեանքն եւ կայքը եւ կատարութեան թնամիներ զատ գիտարութիւնները խափանելու համար չիւնայեք ձեր ժամանակը: Միւշդեռ հէնց որ լսում էք, որ մեծ պետութիւնը մի խափութիւն կամ բարկութիւն ունի հուսալի քաֆիր թնամիների զէմ, ձեր զօրքը հեռախուս էք չէք ուզում պաշտպանել եւ տրամադիր էք անցնիլ նրանց կողմը: Այս լոն իսլամութիւն է: Ես երկար է նամակը. ես հնարաւորութիւններ չունեմ մի քանի պարբերութիւններ առաջ բերել: Իտալիան անանք միայն դրանով, այդ էլ շատ բան է ապացուցանում: Այդ նամակն մ աւելի շատ քրտերին գրգռում է նաեւ Մաջիդ-ու-Սալթանի զէմ որը ակնյայտնի հակառակորդ է տաճիկ կառավարութեան: Սալմաստի ներկայ դատարարը շատ համակրելի անձնաւորութիւն է, բասակարին սզատ մտածող, հմուտ պաշտօնեայ և ուսկով գործերի բնագունակ, նա եթէ երկար մնայ Սուլմաստում, կարող է շատ օգտակար լինել այս գաւառին: Ահա մասամբ եւ սրա զէմ է գրգռում քիւրտ ազաներին եւ սղոսիկազներին չէյիս Համիտ փաշան: Բայց արդեօք այդ յորդուները, չէյիս անէքները կազաքեան քրտերի մտքերի վրայ, տաճիկ կառավարութեանը յոյզող, ասանջող դրոթիւնը քրտերի մէջ կը փոխուի: չնմ կարծում: Թէեւ այնքան էլ չի կարելի հաւատ ընծայել քրտերին,

բայց ստիպուհ, յամառ ջանքերը ապարդիւն չեն անցել. կեանքը աւել է իր անմտանայի դասը, եւ նրանք քրդերը նոյնիսկ Տաճկաստանում գիւմարեցիին կառավարութեանը, ազեւս չեն հասածայնում նախարարակ տեղը բռնել կուրի մէջ, երբ այդ կատարուում է հայերի վերաբերմամբ: Տաճկ կառավարութեան խարդաւանքները, թակարդները այժմ գիպչում են ժայռի: Եւ այդ անշուշտ կրցաւեցնի նրա սիրտը, կարտասուցնի միւսնոյն ժամանակ ցաւագար մարդին:

Միայն գրաւոր կոչերով, գրոււոր յորդորներով չի բաւականանում արիւնի կառավարութիւնը նա մարդ էլ է ճամբում այդ կողմերը, անձամբ տեսնելու իրականութիւնը, ուսումնասիրելու մանրամասն: Սայմասա եղած ժամանայս եկաւ տաճկաստանից մի գոյմագամ, որպէս թէ այնտեղից բերած թխանի համար, Այդ էր հրապարակում, այդ լուրն էր միայն պատում, բայց փոփոխները ուրիշ բաներ էլ էին ասում. այդ փոփոխները ասում, պատմում էին, որ նա ուղարկւած է որոշ միտումներով, իմանալու թէ Սայմաստում որքան յեղափոխականներ կան, ո՞ւր են նրանք ապրում, ի՞նչ ուժ ներկայացնում, պարսից կառավարութիւնը ի՞նչ աչքով է նայում նրանց վրայ: Իսկ թէ ինչի՞ համար են այդ թողբերը կարծում եւ այնքան էլ զբոսար չէ գուշակել, այնքան էլ նրբութեան կարիք չկայ: Թէեւ որդէն անցել է մօտ քսան օր, որ ես հետեցել եմ Սայմաստից, բայց լսում եմ որ այդ գայմագամը դեռ չի գընացել: Թէ ո՞րքան իրական բնաւորութիւն են կրում, որքան ճշգրտմէջ այդ փոփոխները, առ այժմ ոչ ինչ չենք կարող ասել, այդ կը պարզի մօտիկ ապագան՝ բայց հէնց նրա ներկայութիւնը, նրա այդքան երկար մնալը լաւ բան չի գուշակում: Սրանով փակենք մեր առաջին թղթակցութիւնը եւ թող ընթերցողը ամբողջի յիշերը, զսպի իրեն եւ պատրաստի լսել սարսափելի փաստերի շղթան:

Թաւրիզ, 2 դեկ. Ծանկ

### ԴԱՅՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՈՐՈՒՍ ՍԱՐԱՖՈՎ

Պօրիս Սարաֆօֆ իր Թաւրիզ այցելութեան միջոցին երկար տեսակցութիւններ ունեցած է հայկական գատին պաշտպաններու հետ որ կարելի չէ մակեղանական գատէն անշատել. առաւանակներու հանգնութիւնը, ազատ կեանքի համատենջ ցանկութիւնը անլուծելիօրէն կը միացնեն երկու ժողովուրդները, և գիպուածը չէր որ, 1901 զեկտեմբերի միւսնոյն օրով Պետրոս Սէրէճեան և Օննիկ Թորոսեան հայ յեղափոխականներն, Ուիտոսլաւ, Միրճանօֆ և Հաճի Խրիոթօ Իլիէֆ մակեղանացի յեղափոխականները Սուլթանին հրամանով էտիրէնէի մէջ կախաղանահանց: Դարձեալ գիպուածը չէ որ

Հայերը կը միացնէ ու պիտի միացնէ մակեղանական հայդուկախումբերուն: Հարկ չի կայ ըսել թէ՛ համբերութեան ծայրագոյն սպասման հասած յուսահատ ընկճուածներուն այս համաձայնութիւնը ի՞նչ ձեւով և ո՞ր կէտերու վրայ է որ գործնականօրէն պիտի արտայայտուին. ստիկա հայ և մակեղանական քովիթէ: Ինչու գիտնալիք բանն է: Սակայն Պօրիս Սարաֆօֆ նամակով մը ուզած է հաստատել այս համաձայնութեան գոյութիւնը: Ահաւասիկ այդ նամակը:

### ՀԱՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ Թաւրիզ 29 դեկտեմբեր

Խորապէս յուզուած Մակեղանիսէն միտադարձիս Հ. Յ. Գաշնակցութեան ինձ ուղղած շնորհատրուէի ու բուռն համակրանքի արտայայտութիւններէն, անհունապէս քաղցր է ինձ առիթէն օգտուելով քանի մը խօսք ուղղել ձեզ Քրօ Սրմէնիայի միջոցաւ, իրաւացիօրէն մեծարանքի արժան այս թերթին՝ որ մարդկայնական դատի մը պաշտպանը հանգիտացաւ:

Շնորհակցելով ձեր շնորհակալ ըլլալով ձեր շնորհատրութեանը ու բուռն համակրանքին համար, կը խնդրեմ, սեղամ մը եւս, որ բնագոյնիք Մակեղանացիներու կողմէ, եղբայրական համբարշտութեան մեր ամուր պաշտօնութիւնները:

Հայ և մակեղանական այս համբարշտութիւնը արդէն ցցուցինք մենք 1899ին, Լահէի վեհաժողովին սուլեւ հաւաքական մեր բողոքով համիտական լուծին դէմ՝ զոր միտաին կը կըրենք:

Յուսանք, հայ եղբայրներ, որ մօտակայ գարնան այս եղբայրական համբարշտութիւնը յաղթանակը պիտի տանի հասարակական գերագոյն գործունէութեան մը շնորհիւ, որ պիտի խորտակէ բունակալը և ստիպել եւրոպան իր մարդասիրական յանձնառութիւնը կատարելու. ինչ որ իր պարտականութիւնն է արդէն՝ ըստ իրենց ստորագրած Պեոլինի դաշրագրին 23և61րդ յօդուածներուն:

Յուսանք որ այս ազատարար գործունէութիւնը պիտի խորտակէ երկու բազմադարեան նահատակ ազգութիւններու կապանքները:

Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Մակեղանիայ, կեցցէ՛ մարդկային համբարշտութիւնը:

Պօրիս Սարաֆով  
\* Ի, օ Վրմէնիայ \*

### ՖԻԼԻՊՊԻ ԹԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Անդին յանձնախումբն ալ երկու երեք օր ետք ժողովի կը կանչէ միայն քուէարկուները, ուր կարգ մը երկար բարակ օրային ճառեր կ'ետք() կը նշանակեն 10 անհատներ — որոնց չ'ըսը հոն ներկայ էին արդէն և համակարծիք — որպէսզի անոնց հատուցութիւնը առնելով կազմեն հոգաբարձութեան ցանկը, առաջուց վատան ըլլալով անշուշտ որ արդէն դուրսը մնացածները չի պիտի բնագոյնին և շատ անհշտն փոփոխութիւնով թիկնածուներ պիտի մնան լուծուած հոգաբարձութեան անդամները:

Եւ վերջապէս, երկու կողմէ եւ դաժ նախապատրաստութիւններէ ետք, դեկտ. 7ի ընտրութեան օրը ձայներու անհամեմատ մեծամասնութեամբ շահեցան մասնախումբին թիկնածուները:

Ի՞նչ պիտի ընէ, ինչպէ՞ս պիտի շարժի հիմա նոր հոգաբարձութիւնը: Անկեկ կարեւոր հարց մըն է, սպաւալի տեսակէտով մանաւանդ:

Համոզուած ըլլալով հանդերձ, որ նոր հոգաբարձութեան մեծամասնութիւնը ատ պատասխանատու գործին մարդիկը չեն և իբրեւ խրատիկակամ մասնախումբին գործիքը պիտի ըլլան, նորէն ատ հարցը կը դնեմ անոնց առջեւ, պարզի յոյսեր մը ունենալով անոնցմէ մէկ-երկուքին վրայ:

Ի՞նչ պիտի ընէ, ի՞նչ տեսակ պիտի շարժի. Պիտի պահէ՞ վարժարանը իր ներկայ վեճակին մէջ, կամ նորէն գոյթակղուցութեան քարը — կրօն Միջալէւանը — պիտի բերէ վարժարանէն ներս մտցնէ, զայն վարժապետի տեղ դնելով:

Երկուքն ալ հաւ ստարապէս միաւակար են:

Վարժարանը աս վեճակին մէջ պահելով սպաք բոլորովին մեոցուցած պիտի ըլլայ հոգաբարձութիւնը, թէ եւ արդէն աս չըջանը մեռաւ: Իսկ կրօնը ներս առնելով նախ աս անգամ ալ հոգաբարձութիւնը ինք իր ձեռքով ցանած պիտի ըլլայ հակառակութեան սերը, երկրորդ՝ կրօնը իբրեւ ուսուցիչ օգուտ մը չունի, եթէ միաս շունենայ, որով տղոցը վեճակը փոփոխութիւն սը չի կրնար կրել:

Միջոցներ, նպաստաւոր միջոցներ կան, եթէ հոգաբարձութիւնը ուզէ անկեղծօրէն օգտակար ըլլալ ու աշխատել:

Այսօր եւրոպական համալսարանականներ չեն պակտիք եւրոպայի մէջ: Դեռ շատ չընէք, «Շարժուել» յայտարարած է որ հատ մը կար արդէն պատրաստ Պուրկարհայ վարժարանի երէն մէկուն մէջ պաշտօն վարելու փոփաքող: Ուրիշներ ալ կարելի է գտնել:

չական խումբ մը և վարժարանին մէջ գտնուող ուսուցիչներուն ալ ուշ կամ կանուխ դրսի դուռը ցոյց կը տրուէ, որ երթան լաւ մը պատրաստին ու ետք դան:

Ահա՛ նպատակայարմար և խելայի միջոցը:

Տեսնենք հոգաբարձութիւնը իր գործին մէջ:

Յ. Գ. — Վերջնա կիմանաք, որ Գաղաքիս աղային գործերը վարող մասնախումբը օջինճի խումբին դիմելով ներկայացում մը տալ խնդրել ինչպատ աղքատ ուսանողներու:

Աս քայլը մասնախումբին հակացողութիւնը եւ ճաշակին որակը ցոյց կուտայ եւ շատ բան կը բացատրանոր աստիճանաբար: Երբ աւելցնեն մասնաւանդ որ տաճկերէն լեզու վարող Պէնիլեանին խնդարանէ՞ք բաներ ընելու տոմսակ ծախելու համար իբր միջոց գործածան:

Ձէի սպասեր սակայն որ մասնախումբը իր այսպէս յայտարարելով իջեցնէր, գիմելով օջինճիներու՝ որոնք բնիկ սրբութիւնը անարդարականութեան փորձականդալի կը ծառայեցնեն աւելի: Եւ ատանկ խումբի քաջալերել, ան ալ մեր վարժարաններու անունով...

Գեղարուեստասէր ասք. Օրմանեանը կերեւայ իր գեղարուեստական ճաշակը ցոյց տալ ուղեց. բայց գոնէ մասնախումբին մէջ չի գտնուեցա՞ն մարդիկ, օս քայլին հակառակ:

Ես դեռ մէկ կողմ կը դնեմ այն տեսակ մը անքաղաքավարութիւնը, որ ըրած եղաւ մասնախումբը ատ ներկայացումը տալով, գիտնալով հանդերձ որ երգեցիկ խումբը շատ մօտ օրէն պիտի տար ներկայացում մը, ամենակարեւոր նպատակի մը համար, որուն գիտակցաբար թէ անխնայակցաբար միաս կրնային հասցնել այդ քայլով, մինչդեռ իրենք կարելիութիւն ունէին յետաձգելու:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սօֆիա, 27 դեկտ. 1903

Մտաւորապէս երկու ամիս է, որ աստիճանական ընտրութիւնը կատարուեցաւ. միւսնոյն ժամանակ կազմուեցաւ մասնախումբ մը, որուն պաշտօնն էր առաջնորդին իր պաշտօնատեղին հասնելու համար դիւրութիւններ տալ եւ վարել առաջնորդարանի ընթացիկ գործերը:

Բայց մինչեւ այսօր մասնախումբը ժողովի չի հրաւիրուել զատ այժմ վարդապետը ելեր և առանց նախորդ մասնախումբին լուր տալու նոր մասնախումբ մըն է կազմելու և այս անկարող են այդ պաշտօնը տանիլ: Ինքնակոչ մասնախումբը վարդապետին հետ խորհրդակցելով կորցնէ Պուրկարիոյ միջին քաղաքները նամակներ գրել և առաջնորդարանի պէտքերուն համար դրամ պահանջել: Բարեբաղդաբար վարդապետին ձեռքը ինչպիսի չի գտնուեցաւ և տեղէն մըն ալ պատասխան չեկաւ:

Արդ իրաւունք տուաւ իրեն նոր մասնախումբ կազմելու և առաջնորդարանի համար դրամ հաւաքել:

Անբնութեան չափը ալ կանցնէ այդ մարդը և ժողովուրդը ալիւս

չի կրնար հանդուրժել անոր փառա-  
սէնջ անձգութեանց .  
կազմուած օրինակն մասնախում .  
բին կը մնայ ալ այս բոլորէն ետքը  
հաշիւ պահանջել և գործի ձեռնար-  
կիւ —բայց ի՞նչ ընենք որ առանց  
նախագահի :

Ամսոյս Անի վարդապետը մեկնած  
է զէպի Կ. Պոլիս , առանց սակայն  
թողակն խորհրդին և մասնախում .  
վասն Վ. չէ մտադած Սօֆիայի ծա-  
նօթ ջոյնի մասն բարով ըսել : Այդ  
երթնադիտութեան պարագ մըն էր  
որովհետև վասն Վ. յիշեալին իւզոտ  
պի՛թիւքնը և տաք ֆանելաները  
չստ վայելից :

Գնաց , երթայ բարով :  
Հրանդ  
—  
Թարգ. 1 Դեկտ. 1603

Մինչև հիմա մենք , թարիզոր-  
ներս սիրում էինք մեր մէջ գրու-  
նեկո գործիչներին թեղմաւոր գոր-  
ծուէութեանը լոկ ակամատես լինել ,  
քննել , խօսել , վիճել նրանց սկսած  
գործերի մասին , բայց ինքնբն  
ձեռքներնիս ծալած նստում ու սպա-  
սում ենք , որ գրտի մարդիկ մեզ հա-  
մար հրաշքներ գործեն , ինչքան ըն-  
կերութիւններ , հաստատութիւններ  
որ ներկայուս գոյութիւն ունին  
Թաւրիզում բարուն էլ , առանց բա-  
ցառութեան , հիմեւ կազմակերպել  
են մեր մէջ կողմաստակեր և թըր-  
քահայերը , Սկզբում մտակից շու-  
սում մասին իրով նրանց գործունէու-  
թիւնը , չը խորհուսելով այդ գոր-  
ծիչներին , նրանց հեռանալուց յի-  
տոյ , համարելով նրանց սկսած գոր-  
ծերի շարունակելը մեզ համար դժ-  
ար ու անիրագործելի , թողնում  
էին կիսատ ու մոռացութեան մատ-  
նում : Բայց վերջերս սկսել ենք  
սթափել , սկսել ենք ուշքի գալ և  
ամեն միջոց գործ դնել , որպէսզի  
նրանց սկսած գործերը շարունա-  
կենք :

Գոկտօր փաշայեանի հեռանալուց  
Թաւրիզի մասնով երկուստարգութիւնը  
մեծ ցաւ գրաց կորցնելով մի ազնիւ ,  
լուրջ , սովորն , եռանդուն ու ան-  
խնայ գործիչ . Փաշայեանի թշնամի-  
ներն կարծում էին , թէ նորա հե-  
ռանալուց յետոյ , սկսած գործերն ,  
նորա ցանած սերմերն պէտք է մնան  
անխնամ : Ուրախ ենք , որ Թաւրի-  
զի երկուստարգութիւնը ցոյց տեսց ,  
որ ինքն էլ կարող է , եթէ փոքրի  
չատէ աշխատ , յարգել իրենց ար-  
ժանաւոր գործիչներին ու կարող է  
շարունակել նրանց սկսած գործերն :  
Դօկտ. Փաշայեանի հիմնած շա-  
րանական ընկերութիւնը այսօր շա-  
րունակում է իր գոյութիւնը , պա-  
հել է սուսուշոյ նման շարունակելու  
իր եռանդուն գործունէութիւնը : Նո-  
րա երկուստարգութեան անկողին  
միջոց գործ են դնում պահել պահ-  
պանել այդ հաստատութիւնը , ու նո-  
րա քարոզած գաղափարները միշտ  
վտա պահել : Ահա , Փաշայեանը Թաւ-  
րիզի մասնով երկուստարգութիւն տ-  
վորեցրեց լուրջ գործել և խօսքից  
գործի աչցնել : Մեր նոր եւ ապագայ  
սերունդը պիտի գնահատէ այդ գոր-  
ծիչին :

Անցեալ ամսի 26ին բազմաթիւ ե-  
րկուստարգութիւն և փոքրաթիւ կա-  
նանց ներկայութեամբ Պ. Յովսէփ  
կարօխանեանը առաջին դեղամ խօ-

սեց ձարոնի մասին , Դաստիարդ սի-  
րուն լիզով խօսեց ձարոնեայի ընա-  
կան ու քաղաքական աշխարհագրու-  
թեան , զինորական ոյժի , մասւոր  
զարգացման և այդ երկրի նշ նակու-  
թեան մասին :

Դաստիարդն ընդունեցին ծափա-  
հարութեամբ :  
Դաստիարդի լիզույ յետոյ ընտրեց  
նոր վարչութիւն և Երկրորդ դաստիար-  
սութիւնը նշանակուած է ամսոյս 3ին  
և պէտք է խօ. է Պ. Մ. Տէր Զար-  
եանը միկրոքներ ձարոն :

Յանկանում ենք յաջողութիւն .  
Ս. Պետե սկն

Ի Ն Պ Ս Ս  
Հ. Յ. ԳՆՇԵԱԿՍՈՒԹԵԱՆ

Քաղաքիս յարգոյ ազգայինք  
նկատի ունենալով Սասունի ներ-  
կայ տազնապալից վիճակը , պարտ  
համարեցին ինքնարեւարար ինր-  
պատ Հ. Յ. Գաշնակցութեան  
հրապարակային հանգանակու-  
թեան մը ձեռնարկել , որու ար-  
թիւնքը շուրջ 1000 դր. գումարի  
մը հասաւ :

Ուրախալի է արձանագրել , որ  
ամէն անհատ բացի քանի մը ան-  
տարբերութէ , մասնակցեցան այս  
գովելի ձեռնարկին :

Յուսով ենք որ շտեղծ կը  
հետևին մեր օրինակին :

Ձի մունամ հոս յիշատակել յու-  
զիչ ուրարգոյ մը : — Գեորգ Յա-  
կոբեան անուն 5 տարեկան տղէկ  
մը 1 Ֆր . նուէր տալով ինքնա-  
բերարար հարցոյ . « Հայաստա-  
նի համար ես քանի՞ տարի պիտի  
որ պիտի ըլլամ » :  
Հայ մանուկները զինուոր ըլլալու  
ղեն և իրնց ունեցած 1 Ֆր . ը ի  
նպատ յեղափոխութեան կ'ու-  
տան : Հայ երիտասարդ , գուն  
ինչ կը մտածես ...

Մրջիւն  
Ս. լինա , 22 դեկտ.

Ուսուցիչքէն մեզ կը գրեն .

Ուսուցչքի մէջ Պ. Վարդօ չը  
նայելով անյաջող պայմաններու ,  
որ ստեղծած էին Հնչակեաննե-  
րու և մակեդոնական գաղթա-  
կաններու ի նպատ եղած բաւ-  
կան խօշոր հանգանակութիւննե-  
րը , ի նպատ Գաշնակցութեան  
հանգանակութիւն ըրաւ . հաւա-  
քեց մինչև հազար Ֆրանք և  
շարունակութիւնը թողով տեղա-  
կան ընկերներու ինք մեկնե-  
ցաւ :

Հանգանակութիւնը դժուար  
էր մանաւանդ անոր համար , որ  
տեղական Իւշ . կօմիտէի և Հն-  
չակեաններու միջեւ եղած հա-  
մաձայնութիւնը հասարակու-  
թեան մեծ մասը այնպէս ըմբռ-  
նած էր , թէ Գաշնակցականները  
այս տարի Ռուսուքի մէջ հան  
գանակութիւն չը պիտի ընեն :

Աւելորդ չենք համարեր այս  
տեղ յայտարարել թէ « Դեւորժու .

մի թղթակիցը Պ. Մի—Տէ , որ  
Պ. Վարդօի բանախօսութեան մա-  
սին գրած էր , չէր ըմբռնած  
բանախօսին ըրածները և անոր  
բերանը գրած էր յաւ մը հնա-  
րովի խօսքեր : Պ. Վարդօ Հնչակ-  
եանութեան մասին խօսած ատեն  
Հնչակեան կուսակցութեան հաս-  
ուածներուն առանձին առանձին  
ածականներ չի տուաւ եւ , ոչ կեր  
պով յայտարարեց « հալածել մի-  
այն հակախղափոխականները » և  
այն մարդիկ , որոնք միութեան-  
կան գիմակի տակ յեղափոխա-  
կան կուսակցութիւնները տա-  
պալել կը ձգտին :

Շումլայէն մեզ կը գրեն .

— Շումլայի մէջ Պ. Պ. Վարդօ  
և Հրահատ կամար , տեղւոյն  
աղքատ վիճակը տեսնելով , մի-  
եւնոյն մամանակ կուսակցական  
նեղ վէճերուն վերջ տալ ուղե-  
լով որոշեցին այստեղ միասին  
բանախօսել ու դրամ հանգանա-  
կել :

Երկու կէտերուն մէջ ալ յաջո-  
ղեցան :

Հասարակութիւնը այդ համե-  
րաշխ քայլէն մեծ ուրախու-  
թիւն զգալով գրեթէ երկու օր-  
ուան մէջ իր աղքատիկ քսակէն  
մօտ 700 Ֆրանկ նուիրեց երկու  
կուսակցութիւններուն : Երկու  
գործիչներուն հանգանակու-  
թեան գործի մէջ աջակցեցան  
տեղւոյս ազգեցիկ և պատուաւոր  
պարոններէն մէկ քանի հոգի-  
ներ , երկու կուսակցութիւննե-  
րէն ալ :

ՆՈՒԻՐԱՍՏՈՒՈՒԹԻՆ  
ԵՐԿՍԵՈՒ ՈՐԱՄԱՆԱՄ  
ԸՆԿ. ՀԱՅՈՑ ՎՍՈՒՍԵԹ

Բնիկ Սարբերդցի Տ. Վարդան Քա-  
մաւանց շատ ընտիր թուրքէ 39 ե-  
րէսէ բաղկացեալ « ԻՐէփ » անունով  
գրքոյկ մը հրատարակած է , որուն  
մէջ կը պարունակէ հայկական եւ յե-  
ղափոխական ոտանաւորներ :

Տ. Վարդան Քամաւանց Տ. Ա. Ե-  
տիս Գոյումեանի միջոցաւ տոյն գր-  
քոյկէն 500 օրինակ նուիրած է որ-  
բանամ ընկերութեան , գործ. ժո-  
ղովս կուգոյ հրապարակու իր խո-  
րին շնորհակալութիւն յայտնելու Տ.  
Վարդան Քամաւանցին :

Սոյն գրքոյկներ կը ծախուին Տ. Տ.  
Աւետիս Զարպանէլեանի եւ ընկե-  
րութեան հաւաքիչ Յակոբ Ազապ-  
լարի քով , հատ 20 (քսան) սանթիմի  
Ուստի վստահ ենք որ պատ. ազ-  
գայինք պիտի փութան գնել սոյն  
չատ զիւրամասնի գրքոյկէն , ո-  
րուն ամբողջ հասոյթն յատկացուած  
է ընկերութեան ինամած 17 թըը-  
ուառ հայ օրրիկներու :

Մնաճք յարգանք  
Ի դիմաց Գործ. Ժողովոյ  
(Կնի՛ք)

26 դեկ. 1903  
Վառնա

ԿՈՉ ԿԹՈՒԹԵԱՆ

Վաղահաս ձմռան սաստկութեան  
պատճառաւ . տեղւոյս Աղքատախնամ  
ընկերութիւնը նկատելով որ , օր ցաւ  
օրէ աղքատաց ու հիւանդաց ինր  
հետ հետէ տեսնալու վրայ է , ու  
նոյն համեմատութեամբ նպատի  
պէտքերը անհրաժեշտ լինելով , որո-  
շեցին յատկաւ Աղքատիք ու Ս.  
Ընդհան տներու առթիւ մասնաւոր  
նուրաստման պատրաստել ազգայ-  
նոց օգնութիւնը ու գթութիւնը  
խնդրելու համար , բաղղէն հայած-  
եալ թշուառներուն օգնութեան վեթ-  
անհրաժեշտ պէտքերը չմերժելու նը-  
պատակաւ : Հետեւաբար լիայոյս ենք  
թէ աղայինք իրենց եղած դիմումը  
արդէն չպիտի մերժեն իրենց օգնու-  
թիւնը նւիրել ընկերութեանը , որ  
յանուն շատ մը աղքատ ու հիւան-  
դաց կարիւր : Իր խորին շնորհակա-  
լութիւնը կը յայտնէ նուիրատու  
պատուարժան ազգայնոց :

Ի Դիմաց Աղքատախնամ ընկ.  
Գործադիր Ժողովի Վառնայ  
28 դեկտ. 1903 (Կնի՛ք)

ՄԵՐ ԲԱՄԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն կը խն-  
դրուի . որ փութացնեն մեզ զը-  
կել իրենց բաժնեգրները և յե-  
տանայ պարտքերը : Պէտք է  
գիտնալ որ պարտաճանաչութիւ-  
նը առաքինութիւն մըն է :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսէն եւրոպական թերթերու  
կը հեռագրեն որ Էրզրումէն  
հասած նամակներէն հիմացուի  
թէ Սասունի նայակամ Զաւաթ  
էֆէնտի իր պաշտօնեաներուն  
սմբողջ խմբով Սասունէն փա-  
խած է՝ այն պատճառով որ հայ  
յայտնի ֆէտայի Անդրանիկը  
մեծ խմբով մը Սասուն հասած է :

Զորքը գորարանակի հրամա-  
նատար Զէքի փաշա մէնէրալ  
թէֆիկ փաշան երկու գնդով ,  
թեղանթներով և բազմաթիւ  
համալիրներով զրկած է զէպի  
Սասուն , ինք՝ Զէքին ալ կը պա-  
տրաստուի հոն երթալ :

Նոյն ազգայիններէ կիմացուի որ  
քիւրտերու և հայերու միջեւ  
ընդհարում մը տեղի ունեցեր  
է , երբք հայ գիւղեր թալաներ  
են , շատ մը հայ գիւղացիներ  
սպաննուեր են , ոպանուեր են  
նաև բազմաթիւ քիւրտեր :

— Պոլսոյ հայ պատրիարքը  
Թաւրիզի մէջ գտնուող բոլոր  
եպիսկոպոսներուն և առաջնորդ-  
ներուն շրջաբերական մը զրկած  
է՝ հարցնելով թէ ինչ զիրք  
պէտք է բռնել , եթէ Ռուս կա-  
ռավարութիւնը Էջմիածնայ կա-  
թողիկոսին պաշտօնը լոկ ուսու-  
կան պաշտօնեայի մը գրութեան  
վերածէ :

Այս շրջաբերականին նպատա-  
կը մենայն Հայոց կաթողիկո-  
սական ակտիւն տեղը փոխել է :

—Վ. Կաթագիւտը իմանալով որ Կովկասի Ռուս պաշտօնաններէն ոմանք հայ եկեղեցւոյ պաշտօնէից զէմ ամբաստանութիւններ ըրած են եկեղեցական կալուածոց վերաբերեալ որոշմանց գործադրութեան առթիւ. զանոնք հերքեր և ըստ օրինի քննիչ յանձնաժողովոյ մը կազմութիւնը խնդրեր է:

—Երեսնէն կիմացուի թէ սեղույն նամակատան մէջ կառավարութեան հրահանգի համաձայն կը գրաւուին էլ միաձնի սինթիսի անունով գրկուած դրամները և կը յանձնուին կառավարութեան:

—Կը լսուի թէ Ռուս կառավարութիւնը էլ միաձնի սինթիսի պատուիրեր է Կէորգեան ճեմարանի մէջ 40 աշակերտ ընդունել միայն փոխանակ 250ի:

—Զրոյց կը պտտի, Պոլսոյ պատրիարքական շրջանակներու մէջ որ էլ միաձնայ Վ. Կաթագիւտը ծանրապէս հիւանդ է. կաթուածահար ըլլալով:

—Քանի մը ամիս առաջ Ռաթուի քովերը, թուրք սահմանադիրի մօտ իշխանութեան կողմէ ձերբակալուած հայ խումբը ազատ արձակուեր է:

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Հօնօնէն ստացուած հեռագրի մը համաձայն Պուլկարիոյ Պոլսոյ գործակատարը թուրք կառավարութեան նօթա մը տւեր է, որուն մէջ կը յայտարարուի թէ թուրքիս զեռ իր խոստումները չի կատարեց:

—Վզգային ժողովին ընդդէմադիր կուսակցականները, որոնք հեռացան ժողովէն, կրտուի թէ որոշեր են սօսերէն վերջը բացուելիք ժողովին պիտի մասնակցին:

—Իշխան Ֆէրիտիանտի մայրը իշխանուհի Կլէմինտինէ Ռօֆիայէն մեկնած է:

Մենք սակէ առաջ քանիցս աւելի ունեցանք բարեսէր իշխանուհիի ի նպաստ մակեղոնացի գաղթականներու կատարած հանգանակութեանց մասին տեղեկութիւններ տալ:

Հիմա իշխանուհին կերթայ Միլետոնէ՝ ձմեռը հոն անցնելու համար:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Թ Ո Ւ Ր Ք Ի Ա**

Էրզրումի և Պիթիւի հիւպատոսները գեռու շեն հաստատած այդ կողմերէն մասնաւոր ազգի, բնութե կլած տեղեկութիւնները, կը կարծուի որ այդ կողմերուն հայ ու թուրք ընդհարումները չափազանցուցուած են, ձորոն և Ռուսիա Ռարիզի ցա-

րոնական գեապոնտունը կը յայտարարէ թէ ձարոնի կառավարութիւնը սմնէ ճիգ կը թափէ խոյազուութիւնը պահպանել:

Կը հեռագրեն նաև որ ձարոնի կառավարութիւնը թէև գեղոհ է Ռուս կառավարութեան առած պատասխանէն, այնուամենայնիւ բանակցութիւնները կը շարունակէ, որոնք թերեւս քանի մը շարաթ տեսնեն:

—Կօրէն Հօնտօն հասած հեռագրէ մը կիմացուի թէ 25ի գիշերը ու շատին լուր տարածուեր է որ Ռուս և ձարոն նաև տարմիջներու միջեւ ընդհարում տեղի ունեցեր է:

—Մակեղոնացիներու կողմէ Քիւստէնտիլի վրայ եղած յարձակումը «Պուլկ. Հանաբլցայիտո» կը հարգողէ որ այս առթիւ Լուքիպի չորքը շուտ մը շարժման մէջ գրուեր է: Երկու գունդեր զրկուած են տարբեր ուղղութեամբ՝ հայրուկներուն դէմ: Սահմանապահները զլացեր են օգնութիւններ: Հեծելազօրքին համար ճամբայ հանուեր են 53 վախօն ձիեր:

Սյս ամեն իրարանցում եղած է յեղափոխականներու պղտիկ խումբի մը երեւան գալուն պատճառաւ:

—Զօրավար ձէօրճիս հրաման ստանալով արդէն Հոռովէն մեկնած է Կ. Պոլիս, անկէ Մակեղոնիս երթալու համար:

—Սէլանիկի ոստիկանութիւնը լուրեր տարածած է թէ թուրքերու մէջ դաւադրութիւն մը կը պատրաստուի բարենորոգմանց գործը խանգարելու համար: Բանտարկուած են բոլորովին անփութ մարդիկ, մինչդեռ Սէլանիկի կատարածի միջոցին սպաննութիւններ և զոհութիւններ ընող մահաճետականները ազատ կը շրջին:

Բարկա ի հարկ է թուրք պաշտօնեաներու մէկ խաղն է:

**ՄԱԿԵՂՈՆԵԱ**

Աւստրիացի բրօքէսօր Սթրասու Պալքանը ձմեռը դաժ է Մակեղոնի յիշողիքը հիմնովին ուսումնասիրելու համար: Բրօքէսօրը կը յայտարարէ, թէ մակեղոնական կօմիտէները յաջողած են պոլկար ժողովուրդը ոգևորել իրենց սպասութեան գործով և անկէ հաւաքել մեծաքանակ զուարներ ապստամբութիւնը պատրաստելու համար: Պուլկար կառավարութիւնը իր տնտեսական շահերը ինկատուունեալով թէև կուզէ սուլթանի կառավարութեան հետ լաւ յարաբերութիւններ պահել, բայց Պուլկարիոյ մէջ հասարակաց կարծիքը թուրքիոյ դէմ այնքան գաղաւազ է, որ կառավարու-

թիւնը ի պահանջել հարկին պիտի ենթարկուի ու զինու չօրութեամբ պաշտպան պիտի հանդիսանայ ճնշուած Մակեղոնիոյ գատին:

Բրօքէսօրը խորհուրդ կուտայ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին բարենորոգումները փութացնել և սյուպէս ապագայ դժուար ու պատասխանատու կացութեան մը առջեւ առնել:

**ՍԵՐՊՈՒԱ**

Պէլկարաի մէջ լուրեր կը պրտւորին թէ նախարար Նիքօլի գրութեան դժուարութիւնը ի նրկատի ունենալով հրաժարելու մտադրութիւն ունի:

**Ի Տ Ա Լ Ի Ա**

Վառիկանի մէջ մտադրութիւն կայ վիճակահանութեան դնել Լեւոն ժԳ. պայտի ձգած թանկագին իրեպէնները:

**ՅԵՐԱՆՍԱ**

Իտալիոյ և Ֆրանսայի միջեւ եղած հաշտարար առեանը կնքուած է Լահէի դատարանին մէջ՝ նախատեսուած վերապահումներու հիման վրայ:

**ՌՈՒՍԻԱ**

Կառավարութիւնը արդէն ինքսկսած հայ եկեղեցիին հասոյթները գանձել:

—Ռուս սօցիալ տէմօրատները ժողով մը կազմեր են և որոշեր են ցարիզմը տապալելու համար ազատամիտ պուրժուաներու, ինչպէս և օտար ցեղերու հետ միացած գործել, խոստանալով որ ապագային օտար ցեղերը իրաւունք պիտի ունենան իրենց ազգայնական պահանջներուն բաւարարութիւն ստանալ:

**ՉՈՒԻՑԵՐԻԱ**

Պորիս Սարաֆովը, կեղծ անունով ժնէվ կը գտնուի, ինչպէս կը հարգողէ նոյն քաղաքին թերթերէն մին, և դացած է հայ յեղափոխականներուն հետ տեսակցելու:

«Իման» եւս կը հարգողէ Սարաֆովին հոն գտնուելը և կաւելցնէ որ հոն դացած է իրենց կօմիտէի օրգան թերթը հիմնելու և միջազգային ընկերութիւն մը կազմելու փաստուած մակեղոնացիներուն օգնելու համար:

**ՉԻՆԱՍՏՈՆ**

28ին պետական խորհրդին նախագահը ճարոնի դեսպանին յայտարարած է թէ Չինաստանը չէզոք դիրք պիտի բռնէ ձարոնի և Ռուսիոյ միջեւ պատերազմ ծագած պարագային: Միացեալ նահանգները և ճա-

րոն Չինաստանէն կը պահանջեն շուտով իրենց միջեւ ըլլալիք գաշնագրութիւնը կնքել: Չինաստանի արտաքին գործոց նախարարութիւնը շատ զէջ կզգայ ինքիւնքը, որովհետեւ կը վախնայ թէ Ռուսիա չը պիտի համաձայնի Մանչուրիոյ նաւահանադիտները ազատ ձգել:

Բացուած է 1904ի Բաժանորգագրութիւն

**«ՄՈՒՐՃ»**

Գրական, Հասարակական և Գաղափարական Հանդէսի: «ՄՈՒՐՃ» հանդէսը, որ երբեք տարիէ ի վեր կը հրատարակուի նոր խմբագրութեան մը կողմէ և այնուամենայնիւ նախատեսուած է թիւքահայ հայ ամենապաւ գրագէտներու, Հայոց միակ լուրջ ու երազական իմաստով հանդէս է այսօր. Իւրաքանչիւր ամիս լոյս կը տեսնէ 250 — 300 էջերէ բաղկացած մեծադիր հատոր մը, հետեւեալ բովանդակով:

- 1. Վէպեր, պատմուածքներ, թատերգութիւններ. 2. Բանաստեղծութիւններ. 3. Գրական, պատմական և հրապարակախօսական յօդուածներ. 4. Քննադատութիւն և Մատենախօսութիւն. 5. Նորութիւններ հայ և օտար գրականութիւններէ. 6. Գիտութեան, գեղարուեստի և արհեստագիտութեան աշխարհէն. 7. Տնտեսական հարցեր. 8. Ներքին տեսութիւն. 9. Գաւառական կեանք. 10. Արտաքին տեսութիւն. 11. Նամակներ արտասահմանէն. 12. Պարբերական հրատարակութիւններ. 13. Յուշերու և վէպ մը. 14. Յայտարարութիւններ ամէն լիզուով:

ՌԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ  
Արտասահմանի համար տարեկան 32 ֆր. կես տարին 18 ֆր. ամսական 3 1/2 ֆր.

Բաժանորդ գրուելու փոփաքողները թո՛ղ զիմեն հետեւեալ հասցէին, կանխիկ զրկելով յամենգինը:

H. AGHASSER Weinber gerstr, 103II Zürich (Suisse) 2-8

**ԿԱՐԵԻ Ր ԱՉԻ**

Ճամբորդներու Համար

Նախկին Օթէլ Ռոտօփի և այս ամառ Հիւսարի մէջ Օթէլ Պուլկարիսի վարձակալ Աստիկ Սրապիան, այժմ բացած է պանդոկ մը Ֆիլիպէի Մեծ փողոցին վրայ:

Օթէլ ՍԱՆԹՐՈՒ  
Անուամբ: Թաճախորդները գոհ պիտի մնան մարտութիւնէն և արագ ծառայութիւնէն:

Տնօրէն  
Աստիկ Սրապիան  
6 Նոյեմբեր, 1903  
Ֆիլիպէ 7-12

**Է. ԱԿՈՒՆԻ**

«ԿՈՎԿԱՍՏԵՆ ՎԵՐՔԵՐ»  
Գին 3 ֆր. 20 սթ.  
Գնելու համար դիմել Վառնա Բաբկէն Սիւնի ընթեցարանին վարչութեան: Ծանապարհածախսը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի:

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ  
Печатница «Величностъ» Варна